կշտէն, ի ձախ թողլով Կոռիս սարն՝ 1 ½ ժամից հասանք փոքր Սուկաւէտի հարաւային կողմից ի հարաւ արևելս երկարացած ողին վերայ, աստի շեղեցանք և ¼ ժամ դէպի վայր, խոնարհեցանք քերելով փոքր Սուկաւէտի հարաւային ստորոտն հիւսիսային արևելեան ուղղութեամբ, նաև ¼ ժամ ևս արևելեան ուղղութիւնը բռնելով՝ մտանք ձորակներու և փոքրիկ անտառակներու միջև, դուրս ելանք մի փոքրիկ տափարակ մարգագետնի մի վերայ, Գլխաջուր ասուած մեծ աղբիւրի մի կազմած ձորի մօտերն։

Այս տափարակի վերայ և շուրջը, բարձր դիրքերու վերայ տեղ տեղ կրակի բոցն կը բարձրանար, եղներ սայլերից արձակուած էին, զոհերն գետնին վերայ կը թաւալէին, ուխտաւորներու ձայն իրար խառնուած, որով այս ամայի վայրս կենդանութիւն առած էր։

Արդ, մենք կը գտնուինք փոքր Սուկաւէտի հարաւային ստորոտից արևելեան հարաւ բաժանուած Գիլբուն սարի և մեծ Սուկաւէտի կողերուն միջավայրը կազմած գոգի ամենէն զլուխը, մեր աջ կողմ ի խոնարհ մեր աչաց առջև կը պարզուի Ներքին Խոփուզ իւր քաւշանով, նաև արևելեան հարաւ ամբողջ Ալաշկերտի դաշտն, ծաղկանց ընդարձակ լեռներն, յարևելից մեր առջև կը հոսի Խոփուզ գետն, որոյ հանդեպ Թ. գալէի ետևի Շահկոլ լեռներն և որոց վերայէն Ջրաբաշխի ամբողջ շարքն մինչև Սինակ։ Իսկ մեր ձախ կողմն մեր տեսարանն է միայն մեծ Սուկաւէտի հարաւային լերկ երեսն։

Մեր գտնուած տափարակի արևելահարաւն մի փոքր բլուր կայ, գագաթն երկու փոքրիկ մատուռներ կան, անարհեստ կերպով կոշտ քարերն իրար վերայ